ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 15-Ա/2 **12.01.2018թ.**

2018 ԹՎԱԿԱՆԻ (ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՐՏ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ)՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել <<2018 թվականի (փետրվար - մարտ քննաշրջանի)՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների>>:
2. 2018 թվականի բոլոր քննաշրջանների համար դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի թիվ 112 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Քննություններն անցկացնել 2018 թվականի փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը ներառյալ:
4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2018 թ. հունվարի 12-ի N 15-Ա/2
հրամանի

2018 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

(*ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՐՏ ՔՆՆԱՇՐՋԱՆ*)

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2018 թվականի փետրվար – մարտ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», <<Հայաստանի աշխարհագրություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>> և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» և <<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2018 թվականի փետրվար – մարտ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», և Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» և <<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի ՝

8-9 միավոր– 4	16-17 միավոր–8
10-11 միավոր– 5	18-19 միավոր-9
12-13 միավոր– 6	20 միավոր-10
14-15 միավոր – 7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Հավելված N2

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2018 թ. N հրամանի

Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

(փետրվար-մարտ քննաշրջան)

	Առարկա	**քննության անցկացման եղանակը**	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	նորմատիվների հանձնում	15.02.2018թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.02.2018թ.
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	19.02.2018թ.
4.	Հասարակագիտություն	բանավոր	22.02.2018թ.
5.	Ինֆորմատիկա	բանավոր	23.02.2018թ.
6.	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	24.02.2018թ.
7.	Կենսաբանություն	գրավոր	26.02.2018թ.
8.	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	27.02.2018թ.
9.	Համաշխարհային պատմություն	գրավոր	01.03.2018թ.
10.	Ֆիզիկա	գրավոր	06.03.2018թ.
11.	Քիմիա	գրավոր	10.03.2018թ.
12.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն)	գրավոր	13.03.2018թ.
13.	Աշխարհագրություն	գրավոր	15.03.2018թ.

*Քննությունների սկիզբը ժամը՝ 11:00-ին

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց

(փետրվար - մարտ քննաշրջան)

	Առարկա	**քննության անցկացման եղանակը**	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	նորմատիվների հանձնում	15.02.2018թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.02.2018թ.
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	19.02.2018թ.
4.	Հասարակագիտություն	բանավոր	21.02.2018թ.
5.	Ինֆորմատիկա	բանավոր	23.02.2018թ.
6.	Համաշխարհային պատմություն	գրավոր	26.02.2018թ.
7.	Ռուսաց լեզու և գրակ. կամ ռուսերեն	գրավոր	28.02.2018թ.
8.	Ֆիզիկա	գրավոր	02.03.2018թ.
9.	Քիմիա	գրավոր	05.03.2018թ.
10.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	գրավոր	07.03.2018թ.
11.	Կենսաբանություն	գրավոր	09.03.2018թ.
12.	Աշխարհագրություն	գրավոր	12.03.2018թ.
13.	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	14.03.2018թ.

*Քննությունների սկիզբը ժամը՝ 11:00-ին